
**ԲՈՒՍԱԲՈՒԾԱԿԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԶԴԻՆԵՐԻ
ԵՎ ՔՐԴԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ
(Նախնական տվյալներ)**

**ՌՈՍԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ՆԻՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ-ՂԱՆԴԻՅԱՆ,
ՀԱՍԼԵՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**

Մարդկանց և բույսերի փոխառնչությունների ուսումնասիրությունը միջ-մասնագիտական գիտաճյուղ է (սոցիալ-մշակութային մարդաբանություն, բուսաբանություն, գյուղատնտեսություն), որը հիմնականում հայտնի է էթնոբուսաբանություն անվամբ:

Հայաստանի Հանրապետության էթնոբուսաբանությանը վերաբերող սակավաթիվ հետազոտություններ կան: Ստորև քննարկվում են եզրինների և քրդերի¹ որոշ տնտեսավարական և կենցաղային ավանդույթներ, քանզի ՀՀ եզրիական խոշոր համայնքի² բուսական տնտեսության, մշակույթի ու ավանդույթների հետազոտությունը արդիական են Հայաստանի էթնոբուսաբանական ուսումնասիրությունների ընդհանուր պատկերի կառուցման տեսանկյունից: Եզրինների բույսերին առնչվող գործունեության հետազոտությունը նաև նպաստում է տվյալ համայնքի մշակութային ժառանգության պահպանմանը: Հայաստանում բնակվողների էթնոբուսաբանության ոլորտի մշակութային պրակտիկաներին վերաբերող շատ տվյալներ անվերադարձ կորել են դեռևս խորհրդային ժամանակաշրջանում՝ կա՛մ պատշաճ ձևով չգրանցված լինելու պատճառով, կա՛մ դրանք ընդհանրապես չեն գրանցվել և բանավոր տարբերակով չեն պահպանվել: Պետք է նկատի ունենալ, որ ժամանակի ընթացքում էթնոբուսաբանական մշակույթին, հատկապես ավանդական շերտին վերաբերող բանավոր գիտելիքները աստիճանաբար կորսվում են իրենց կրողների կյանքից հեռանալու հետ: Ուստի անհրաժեշտ է փորձել գրանցել գոնե պահպանված ավանդույթները, ուսումնասիրել և հրատարակել, այլապես ոչ հեռու ապագայում Հայաստանում բույսերին առնչվող մշակույթին վերաբերող հարցերի շուրջ կարող ենք միայն ենթադրություններ անել կամ ապավինել մշա-

¹ Հետազոտության թիրախ հանդիսացող Հայաստանի կուրմանջիախոս բնակչության մեծ մասը իրեն համարում է եզրի, սակայն կան նաև իրենց եզրի-քուրդ և քուրդ համարողներ (հիմնականում՝ Արագածոտնի մարզում), որոնք իրենց եզրի համարողների սերունդ են կամ նույնիսկ սկզբից իրենց համարել են եզրի, հետո՝ քուրդ:

² Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքների՝ հաշվվում է 35 308 եզրի և 2162 քուրդ՝ <http://www.armstat.am/>, 01. 10. 2014.

կույթի (ներառյալ էթնոբուսաբանության) վերծանման հնագիտության սոված ոչ կատարյալ հնարավորություններին:

Հայաստանի տարբեր շրջանների բնակչության՝ բույսերին վերաբերող սնտեսական և հոգևոր մշակութային ավանդույթներին են անդրադարձել որոշ հայ և օտարազգի հետազոտողներ³: Սակայն բույսերին առնչվող մշակութային պրակտիկաներին (հավաքում, պահպանում, օգտագործման տարբեր ոլորտներ, դրանց մասին գիտելիքների փոխանցում և այլն) անդրադարձը զգալիորեն նվազ է ներկայացված՝ ազգաբանության ոլորտի հետազոտողների շրջաններում բուսաբանական մասնագիտական գիտելիքներին չսիրապետելու պատճառով: Նույն կերպով կատարվել են էթնոբուսաբանական որոշ դիտարկումներ բուսաբանության ոլորտի մասնագետների կողմից⁴, որոնց մոտ էլ բացակայում է ազգաբանական, սոցիալ-մշակութային մարդաբանա-

³ Վ. Բ ղ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, Ս. Լ ի ս ի յ յ ա ն. Ձանգեզուրի հայերը, Երևան, 1969, Ս. Հ ռ թ ո յ ա ն. Հայոց ձիթահանության մշակույթը (XIX–XX դ. առաջին կես).– Ծայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 23, 2007, Երևան, էջ 4–102, Ս. Ե ռ ե մ յ ա ն. Естественные-исторические основы питания армянского народа.– В кн.: Армянская кулинария. М., 1960, с. 21–28; Փ. Բ ռ ո ճ Ե Լ Յ. Материальная цивилизация, экономика и капитализм, XV–XVIII вв., т. 1. Структуры повседневности: возможное и невозможное. М., 2007; Գ. Դ Ե Լ Մ Գ Յ ա ն. Горские князья, партвыдвиженцы и помидорщики: двести лет социальной эволюции адыгейских элит, 2006, <http://www.circassianworld.com/RU/Derlugian.html>; Ս. Ս մ ի ը ի խ ա ն յ ա ն. Սունկը լոռեցիների հավաքչական մշակույթում.– Ծայ ժողովրդական մշակույթ, հ. XVI, Երևան, 2014, էջ 93–101, Վ. Ա ռ ա կ Ե Լ Օ Վ ա. The Onion and the Mandrake: Plants in Yezidi Folk Beliefs.– “Journal of Persianate Studies”, 7, 2014, pp. 49–56 և այլն:

⁴ Ե. Տ ո Լ Ե Տ Վ ա. Полевые и огородные культуры Армении.– Труды по прикладной ботанике, генетике и селекции, т. XXIII, вып. 4 (1929–1930). Л., 1930; Ա. Կ. Մ ա Գ ա Կ Յ ա ն. Естественная растительность Армении как производительная сила. Ереван, 1935; Գ. Ե ռ օ շ Ե Ն Կ Օ. Дикорастущие овощные растения АрмССР.– Бюллетень Бот. сада АН АрмССР, т. 3, 1941, с. 33–37; Ա. Ա. Գ ռ օ Ս Տ Գ Ե Յ մ. Растительные ресурсы Кавказа. Баку, 1946; օ ն յ Ե. Растительные богатства Кавказа. М., 1952; Ա. Գ. Ա ռ ա Ր ա Տ յ ա ն, Ն. Մ. Մ Ե Լ Ի Կ յ ա ն. Дикорастущие жиромасличные растения Армении.– Сб. научн. трудов АрмСХИ, 9. Ереван, 1955, с. 195–213; Ս. Կ. Յ օ Լ օ Տ Ն Ի Ը Կ Ա Յ. Лекарственные ресурсы флоры Армении, т. 1. Ереван, 1958; т. 2. Ереван, 1965; Ս. Ա թ Ր Ի Կ Յ ա ն. Ценное растительное сырье из флоры Армении для пищевой промышленности.– «Биологический журнал Армении», № 25, 1972, с. 74–79; Ս. Ա թ Ր Ի Կ Յ ա ն. Краткая история использования полезных растений флоры Армении с древних веков до нашего времени (предварительное сообщение).– «Флора, растительность и растительные ресурсы АрмССР», 1981, № 8, с. 171–194; Ս. Թ ը Ր ը Ս Յ ա ն. Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983, Ի. Մ Ե Լ Կ Մ Յ ա ն. Дикорастущие пищевые растения Арагатской котловины.– «Флора, растительность и растительные ресурсы Армении», 1991, № 13, с. 228–246; Կ. Գ ա մ ա ն Յ ա ն. Useful Plants of Armenian Flora.– “Development of the Full Project for In-situ Conservation and Sustainable Use of Agrobiodiversity”. Yerevan, 1999; Պ. Ղ ա ն ը ի լ յ ա ն, Ս. Բ ա Ր Ս Ե Ղ յ ա ն. Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի զենոֆոնը, Երևան, 1999, Թ. Գ. Մ ա տ ը Ր յ ա ն, Ս. Լ. Գ և ը Ր Գ յ ա ն. Հայաստանի ուտելի վայրի բույսերը, Երևան, 2007 և այլն:

կան հենքը: Այսպիսով, տվյալ ոլորտում ուսումնասիրություն կատարելու համար ակնհայտ էր միջմասնագիտական մոտեցման անհրաժեշտությունը⁵:

Ինչ վերաբերում է հայաստանաբնակ եզդիների ու քրդերի բուսաբուսական և հավաքչական ավանդույթներին, ապա դրանք նախկինում խորացված և համակարգված ձևով չեն ուսումնասիրվել: Թվարկված աշխատանքներում առկա են միայն ընդհանուր բնույթի տեղեկություններ (մինչդեռ անասնաբուսական մասը մանրակրկիտ ուսումնասիրված և հրատարակված է)⁶:

Դաշտային հետազոտական աշխատանքները ներառել են Հայաստանի գյուղաբնակ եզդիական և քրդական համայնքները, եզդիների բնակության գլխավոր վայրերն ու բարձրալեռնային անասնապահական կայանները: Հետազոտություններ են կատարվել և՛ եզդիական, և՛ քրդական և՛ խառը էթնիկական կազմով գյուղերում՝ Բանավան, Նոր Գեղի, Արզնի, Մայակովսկի, Ջովունի և Քանաքեռավան (Կոտայքի մարզ), Ռանչպար, Նորամարգ, Մխչյան, Վերին Արտաշատ, Բերդիկ (Արարատի մարզ), Ֆերիկ, Ակնալիճ, Առատաշեն, Ակնաշեն (Արմավիրի մարզ), Թլիկ, Արևուտ, Դոմասար, Շամիրամ, Միրաք, Ռյա Թագա, Ճարձակիս, Ալագյազ, Ջամշլու, Միփան, Ավշեն, Սադունց, Շենկանի, Օրթաձյա (Արագածոտնի մարզ), ինչպես նաև Վարդենիսի («Ջերմուկի սարեր»), Գեղամա (Աժդահակ, «Հանքավանի սարեր») լեռնաշղթաներում ու Արագածի հարավային լանջերին տեղակայված բարձրլեռնային կայաններում:

Աշխատանքները կատարվել են երկու փուլով՝ դաշտային նյութի գրանցում և հավաքված նյութի մշակում: Հետազոտության համար անհրաժեշտ նյութերը գրանցվել են անկետային հարցումների, կենսագրական հարցազրույցների, անմիջական դիտարկումների միջոցով, որոնք զուգակցվել են ձայնա- և տեսագրություններով: Զրուցակիցներ, բանասացներ են հանդիսացել հիմնականում միջին և ավագ սերնդի ներկայացուցիչները (տարիքային այս շերտն է ներկայացվել որպես ավանդույթների հիմնական կրողներ-պահպանողներ):

Փաստագրական նյութ ունենալու համար դաշտային աշխատանքների ընթացքում հավաքվել են նաև բուսական նմուշներ ու հերբարիում, որոնք ուսումնասիրվել և նույնականացվել են ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտու-

⁵ Սույն հետազոտությունն իրականացվել է բուսաբանության, գյուղատնտեսության, ազգաբանության և սոցիալ-մշակութային մարդաբանության ոլորտներում մասնագիտացած, համապատասխան կրթական հենք ու գիտահետազոտական փորձ ունեցող մասնագետների կողմից:

⁶ М. Д а р е ш я н. Скотоводческое хозяйство курдов Восточной Армении (по материалам второй половины XIX – начала XX века). Ереван, 1986; Ա. Ա Վ Ղ Վ Ն. Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957; Т. А р и с т о в а. Материальная культура курдов XIX – первой половины XX в. М., 1990; Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր (Յու. Մկրտումյանի խմբագրությամբ), հ. 1, Երևան, 2000:

տում՝ համապատասխան համեմատական նյութի և գրականության⁷ օգտագործմամբ:

Դաշտային աշխատանքներն սկսելիս և դրանց զուգահեռ մշտապես առնչվում էինք այն կարծրատիպին, որ անտեղի են եզդիների ու քրդերի էթնոբուսաբանական մշակույթը թիրախավորված ուսումնասիրելու փորձերը, հիմնականում այն փաստարկմամբ, թե հայաստանաբնակ եզդիները և քրդերը զբաղվում են միայն անասնապահական տնտեսավարմամբ, հետևաբար, չեն ունենա բուսաբուծական և բուսահավաքչական տնտեսավարման ճյուղեր: Այնուհանդերձ, դաշտային աշխատանքներից ստացված արդյունքների մշակումը տվեց մեկ այլ պատկեր, ըստ որի՝ անասնապահությունը եզդիների զբաղվածության միակ ուղղությունը չէ. եզդիների և քրդերի տնտեսությունում և կենցաղում զգալի դեր ունեն բուսաբուծությունն ու բուսահավաքչությունը: Ավելի, հենց անասնապահական մշակույթն է շատ դեպքերում նպաստել բուսահավաքչական հարուստ փորձի կուտակմանը, բուսաբուծական և բուսահավաքչական մշակութային պրակտիկաների մասին գիտելիքների փոխանցմանն ու պահպանմանը: Ըստ էության, այս տնտեսավարման ճյուղերը՝ անասնապահությունը, բուսաբուծությունն ու բուսահավաքչությունը, սերտորեն փոխադրկապված են միմյանց, և մեկը ամեննին չի բացառում, այլ նպաստում է մյուսին:

Բուսաբուծություն: Բուսաբուծական տնտեսամշակութային գործունեությամբ զբաղվելը սովորաբար պահանջում է երկարաժամկետ նստակյաց կեցութաձև, այլապես անհնար է դառնում հողագործական սեզոնային աշխատանքներ կատարել: Այս առանձնահատկությունը նկատի ունենալով՝ կփորձենք քննարկել, թե եզդիական համայնքներում ինչպես է ձևավորվում բուսաբուծական մշակույթը, որտեղ ըստ տարբեր դիտարկումների ու վիճակագրության՝ հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, և պահանջվում է սեզոնային ներքին միգրացիա դեպի հարուստ արոտավայրերը:

Հարթավայրային շրջաններում՝ հատկապես Արարատյան դաշտում, եզդի բնակչությունն, իրեն հիմնականում ներկայացնում է որպես անասնապահական տնտեսավարման կրող, զուգահեռ զբաղվում է նաև ակտիվ հողագործությամբ: Առաջին հայացքից հակասական կարող է թվալ տնտեսավարման այս երկու տիպերի համատեղումը: Եզդիական և քրդական համայնքներում դաշտային բուսաբուծական մշակույթի ձևավորումը, ինչպես իրենք են նշում, հիմնականում կատարվել է խորհրդային շրջանում, երբ համակարգն էր թելադրում մարդկանց զբաղմունքը: Այդ շրջանում, անկախ ազգային պատկանելությունից, մարդկանց մեծամասնությունը համախմբված էր կոլեկտիվ տնտեսություններում, որտեղ մշակվելիք բույսերի կազմը և ծավալները որոշվել են (կարելի է նույնիսկ ասել՝ պարտադրվել են) համակարգված ձևով՝ կառավարության կողմից: Հետխորհրդային շրջանում ամեն անհատ (ընտանիք) ինքն է որոշում՝ ինչ բույսեր մշակի և ինչ ծավալներով: Մա մի հետաքրքիր շրջան է, երբ գյուղական համայնքների գյուղատնտեսությունը ձևավորող-թե-

⁷ А. А. Г р о с с г е й м. Определитель растений Кавказа. М., 1949; А. Л. Т а х т а д ж я н, А н. А. Ф е д о р о в. Флора Еревана. Л., 1972; Флора Армении, т. 1–11, 1954–2010, և այլն:

լադրող համակարգը փլուզվեց, և ձևավորվեց գյուղատնտեսական նոր մշակույթ՝ պայմանավորված տվյալ տեղանքի որոշակի մշակաբույսերի համար նպաստավոր բնակլիմայական պայմանների առկայությամբ, բուսաբուծական ավանդույթներով՝ և շուկայի (գլխավորապես ներքին շուկայի) պահանջներով: Հարցվածները (եզդի, քուրդ) նաև նշում են, որ ընդօրինակելով իրենց համագյուղացի հայերին՝ ոչ մի տարբերություն չեն տեսնում իրենց և հայերի վարած բուսաբուծական տնտեսություններում: Նույնը պնդում են հարցված եզդիների ոչ եզդի համագյուղացիները (գյուղի ագրոնոմները նույնպես վկայում են այս մասին): Մեր անմիջական դիտարկումների ընթացքում ևս չեն գրանցվել էական տարբերություններ՝ մշակվող բույսերի կազմում կամ մշակման եղանակներում:

Եզդիների և քրդերի բուսաբուծական ու բուսօգտագործման առանձնահատկությունը, որին առնչվել ենք, այն է, որ դավանանքով, ավանդույթներով կամ պարզապես նախապաշարունակներով բացատրվող արգելքներով պայմանավորված որոշ մշակաբույսեր ընդունված չէ կիրառել կենցաղում. մասնավորապես, կաղամբը (լատ.՝ *Brassica oleracea varietas capitata L.*), որի օգտագործումը եզդիների մոտ որոշակիորեն արգելված է կրոնի ազդեցությամբ⁸: Կաղամբի արգելված կամ «հարամ» լինելու մասին նշում են հարցման գործնականորեն բոլոր ենթարկվածները: Ըստ հարցված եզդիների՝ կաղամբը «հարամ» է համարվում, որովհետև մի եզդի (այլ վարկածով՝ Մալակե Թավուզը)⁹, փախչելով իրեն հետապնդողներից, թաքնվում է կաղամբի բոստանում, որտեղ կաղամբի տերևներն իրենց ճոճոցով մատնում են նրան¹⁰: Գրանցել ենք նաև կաղամբ չուտելու ոչ կրոնական հենքով վարկած, ըստ որի՝ եզդիներն իրենց համար կաղամբի արգելված լինելը հնարել են որպես պատրվակ թուրքական բանակում չճառայելու համար, որտեղ զինվորների կերակուրը հիմնականում կաղամբով էր պատրաստվում: Գրոնական արգելքները, սակայն, միշտ չէ, որ սահմանափակում են կաղամբի օգտագործումը եզդիների կողմից. հաճախ գրանցել ենք նաև կաղամբի մշակման ու օգտագործման դեպքեր բացարձակապես առանց որևէ սահմանափակումների¹¹: Այլ դեպքերում կաղամբ մշակում և օգտագործում են ամենօրյա սննդում, բացառությամբ կրոնական տոների¹²: Որոշ ընտանիքներ կաղամբ մշակում են հիմնականում վաճառելու

⁸ Տվյալ բնակավայրի (շրջանի) բուսաբուծական ավանդույթները, ըստ էության, տեղի հայերի ավանդույթներն են:

⁹ Т. Ф. А р и с т о в а. Курды Закавказья. М., 1966, с. 74.

¹⁰ Մալակե Թավուզը «եզդիների հրեշտակն» է, որը հանդես է գալիս սիրամարգի տեսքով (G. A s a t r i a n, V. A r a k e l o v a. Malak-Tawūs: The Peacock Angel of the Yezidis.—“Iran & the Caucasus”, v. 7, № 1/2, 2003, pp. 1–36):

¹¹ Համանման պատմություն կա նաև կապված խոզի մսի «հարամ» լինելու հետ: Այս դեպքում ըստ մի վարկածի՝ եզդին (կամ Մալակե Թավուզը) փորձում է թաքնվել խոզերի մեջ, որտեղ նրանք մատնում են ձայներ արձակելով, իսկ մյուս վարկածով՝ խոզի միսը հարամ է համարվում, որովհետև խոզերը մտնում են կաղամբի անիծված բոստանը և ուտում կաղամբ, որի պատճառով իրենք էլ են դատնում «հարամ»:

¹² Նույնը վերաբերում է խոզի մսին և խոզի մսից պատրաստված սննդամթերքին:

¹³ Այն ընտանիքներում, որտեղ կաղամբ չեն օգտագործում, տղաման փաթաթում են խաղողի թփով:

նպատակով, իրենք չեն օգտագործում կամ շատ քիչ են օգտագործում: Եվ վերջապես, կան ընտանիքներ, որտեղ արգելված է կաղամբը նույնիսկ բակ մտցնել: Հարցվածները նշում են, որ կաղամբի օգտագործումն արգելված է հոգևորական կաստաներին՝ շեյխերին և փիրերին, իսկ աշխարհիկ եզդիներին՝ մրիդներին, այն կարելի է¹⁴: Արտաքին նմանության պատճառով՝ եզդիների կողմից երբեմն կաղամբին համանման վերաբերմունքի են արժանանում նաև ծաղկակաղամբը¹⁵ (*Brassica oleracea varietas botrytis L.*) և հազարը¹⁶ (սալաթ կամ մառով) (*Lactuca sativa L.*): Զրուցակիցներից ոմանք նշում են, որ եզդիներին արգելված է նաև լոբին (*Phaseolus vulgaris L.*), սակայն մեզ դեռ չի հաջողվել պարզել դրա նախապատմությունը: Երբեմն հարցվածները արգելված են համարում նաև կանեփը (*Cannabis sativa L.*), ոմանք՝ արևածաղիկը (*Helianthus annuus L.*): Կանեփի համար դրված արգելքը հիմնավորում են վերջինիս որպես թմրանյութ ունեցած վատ համբավով: Արևածաղիկի դեպքում արգելքը հիմնավորում են նրանով, որ արևածաղիկի սերմերը «չրթելուց թքում են»: Մակայն հազարի, լոբու, կանեփի և արևածաղիկի արգելված լինելու մասին պատմությունները էպիզոդիկ են. հարցվածներից շատերը երբևէ չեն լսել դրա մասին և մյուսների կողմից դրանց արգելված համարելը, չմշակելն ու չօգտագործելը զավեշտական են համարում և դրանց օգտագործման օրինակներ բերում: Նման օրինակներից հիշատակելի ենք համարում կանեփի սերմերի օգտագործումը տղամայի մեջ:

Եզդիները բույսեր մշակել և մշակում են նաև միջին ու բարձր լեռնային շրջաններում՝ մշտական բնակության վայրերում կամ ամառային արոտավայրերում, որտեղ ապրում և անասնապահությամբ են զբաղվում տարվա զգալի մասը: Մակայն օբաների¹⁷ մոտակայքում բույս մշակելը համատարած բնույթ չի կրում և, ինչպես բանասացներն են նշում, ռիսկային ու ոչ արդյունավետ նախաձեռնություն է բարձրալեռնային շրջանների անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով: Մշակում են գարի, ցորեն, կարտոֆիլ, կոտեմ և այլ կանաչեղեն:

Հավաքչություն: Եզդիների հավաքչական մշակույթը, ավանդույթները, որոնք գործնականորեն համարյա փաստագրված չեն, իրականում բավական հարուստ են և կարևոր դեր ունեն գյուղաբնակ եզդիների տնտեսության ու կենցաղի մեջ: Հավաքչությամբ զբաղվում են գլխավորապես բարձրադիր շրջաններում՝ այնտեղ տեղակայված գյուղերի տարածքում կամ դրանց մոտակայքում, և օբաների մոտակայքում, երբ կենդանիներին տանում են ամառային արոտավայրեր: Ցածրադիր շրջաններում, օրինակ՝ Արարատյան դաշտում, ավելի հազվադեպ են հավաքչությամբ զբաղվում՝ նույնիսկ այն դեպքե-

¹⁴ Եզդիները բաժանվում են երեք կաստաների՝ շեյխեր, փիրեր և մրիդներ: Շեյխերը և փիրերը ներկայացնում են եզդիների հոգևոր դասը, իսկ մրիդները՝ աշխարհիկ: Կաստաների միջև ամուսնություններն արգելված են:

¹⁵ Ծաղկակաղամբի դեպքում այդ նմանությունը նաև անվան մեջ է, ի լրումն դրա՝ այն իրականում էլ նույն *Brassica oleracea* տեսակն է, ինչ սովորական կաղամբը:

¹⁶ Հազարը ինչպես կարգաբանորեն, այնպես էլ կենսաբանորեն ամբողջությամբ տարբերվում է կաղամբից. դրանք պատկանում են բույսերի տարբեր ընտանիքների՝ կաղամբագգիների և բարդածաղկավորների:

¹⁷ Օբա՝ ամառային, ժամանակավոր կացարան:

րում, երբ իրենց հայտնի օգտակար բույսերն աճում են իրենց բնակատեղիների շրջակայքում կամ անմիջապես իրենց տնամերձ հողատարածքներում: Հիմնավորումը միշտ նույնն է. լեռնային շրջանների բույսերի սննդային և համային որակներն ավելի բարձր են համարում, քան ցածրավայրերինը: Հաճախ ենք լսել «Մարերի բույսերը համով են, քաղցր են, անուշ են, Արանի»¹⁸ բույսերի նման դառը ու կոշտ չեն» արտահայտությունը: Եզդիներն Արարատյան դաշտում երբեմն վայրի բույսեր են հավաքում, եթե անասնապահությամբ չեն զբաղվում և ամառները սար չեն գնում կամ հավաքում են վաճառելու նպատակով:

Մարերում հավաքված և սննդում կամ ժողովրդական բժշկության մեջ կիրառվող վայրի բույսերի մասին այս կամ այն չափով գիտելիքներ ունեն գործնականորեն բոլոր եզդիները, նույնիսկ նրանք, ովքեր չափահաս տարիքում սար չեն գնացել՝ իրենց սեփական անասնապահական տնտեսությունը չեն ունեցել: Օգտակար վայրի բույսերի մասին գիտելիքների աղբյուրները եզդիների մոտ հիմնականում երեքն են:

1) Եզդիական համայնքի ավագ սերնդի ներկայացուցիչների պատմածները, հիմնականում՝ սեփական ընտանիքի՝ ծնողների, տատիկների, պապիկների և այլն: Այս դեպքում վայրի բույսերի հավաքչությանը և օգտագործմանն առնչվող գիտելիքներ ստացել են սկսած մանուկ հասակից՝ ընտանիքի հետ սարերում անցկացրած ժամանակներից: Ընդ որում, սովորել են անմիջականորեն մասնակցելով հավաքման պրոցեսին: Տեղին է նշել, որ հավաքչությամբ զբաղվել և զբաղվում են ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ ու երեխաները, սակայն սնունդը և դեղաբույսերի թուրմերը պատրաստում են հիմնականում կանայք¹⁹: Ինչպես նշում է բանասացներից մեկը, «Էն բույսերը, որ եզդիները ճանաչում են, ուտում են, շատ հայերը չեն ճանաչում: Դե մարդիկ չեն գնացել, քոչվոր չեն էղել, իսկ մեր եզդիները քոչվոր են էղել, սարեր, տարբեր սարեր են գնացել, տարբեր տեղեր են էղել...» (եզդի կին, գ. Ռանչպար, Արարատի մարզ): Կարևոր հարց է պարզել, թե հավաքչական գործունեությունը որքանո՞վ է հին եզդիների մոտ: Ցավոք, հիմնականում հնարավոր չի լինում շատ խորը գնալ և պարզել թե, օրինակ, հարցվողների նախնիները XIX դարում հավաքչությամբ զբաղվել են, թե՛ ոչ: Սակայն լինում են նաև «երջանիկ բացառություններ», երբ տարեց հարցվածները հիշում են իրենց ծնողների, պապիկների և տատիկների պատմածները: Օրինակ՝ այս դեպքը. «Մտեղի ժողովուրդը սկի են բանջարը հասկանալ չի, մերս երեխա ժամանակից ճանաչել ա, ընդեղից ա էկել, Ղարսի սարերից» (եզդի կին, գ. Ռանչպար): Այս բանասացն որոշակի բույսերի մասին խոսելիս հիշատակեց կամ հատուկ նշեց, որ այն օգտագործում էր նաև իր պապը կամ մայրը, և որ նրանք պատմում էին, որ մինչև Ղարսից գաղթելն այնտեղ էլ հավաքում և օգտագործում էին այդ բույսերը:

¹⁸ Եզդիներն Արարատյան դաշտին □Արան□ են անվանում:

¹⁹ Բոլոր հարցվածները սարերում հավաքած ուտելի բույսերը հիշում են ակնհայտ հաճույքով և կարոտով ու դա ասոցիացնում են սարերում իրենց անցկացրած հաճելի ժամանակների հետ (այն եզդիները, որոնք այլևս սար չեն գնում՝ երիտասարդ ժամանակների հետ):

Ավագ սերունդը, որպես հավաքչական ավանդույթները, մշակույթը կամ պարզապես գիտելիքները փոխանցող աղբյուր, եզդիների մոտ հիմնականն է, սակայն կան այդ մշակույթի, գիտելիքների համալրմանը մասնակցող այլ աղբյուրներ ևս (տե՛ս ստորև՝ կետ 2 և 3): Նկատելի է երիտասարդների մոտ առկա հետաքրքրությունն ազգային ավանդույթների՝ ներառյալ բույսերի հավաքչության և օգտագործման եղանակների նկատմամբ:

2) Եզդիների համար օգտակար վայրի բույսերի մասին գիտելիքների հավելյալ աղբյուր են ծառայել նաև հայերը: Եզդիները հայերից սովորել և սովորում են առօրյա կյանքում՝ ապրելով նույն բնակատեղիներում, սարերում՝ կենդանիներին լեռնային արոտավայրերում պահելիս, շուկաներում՝ տեսնելով վաճառվող վայրի բույսեր և այլն:

Շատ բույսերի պարագայում մենք չենք տիրապետում տվյալների՝ եզդիներն են հայերից սովորել հավաքչության ոլորտում, թե՛ հակառակը: Մակայն ակնհայտ է, որ վերջին տասնամյակներում հայերի մեջ, պակաս պահպանողական լինելու պատճառով, կորսվել են օգտակար բույսերի մասին դարերով կուտակված ավանդույթները, այն դեպքում, երբ եզդիները, լինելով համեմատաբար պահպանողական և ավանդապաշտ, երբեմն ավելի լավ են պահպանել նույնիսկ հայերից փոխառված տեղեկությունները բույսերի մասին: Այսօրվա դրությամբ շատ շրջաններում եզդիներն ավելի լավ են ճանաչում տարածքում աճող օգտակար բույսերը և լավ գիտեն դրանց օգտագործման եղանակները, քան տեղի հայերը:

3) Որոշ եզդիներ համալրում են իրենց գիտելիքների պաշարը գրավոր նյութերից, հեռուստատեսությունից, ռադիոյից ու այլ աղբյուրներից ստացած տեղեկություններով: Օգտվում են հիմնականում հայալեզու և ռուսալեզու աղբյուրներից: Այս խմբում կան մինչև յոթանասուն տարեկաններ, սակայն երիտասարդները գերակշռում են:

Ստորև ներկայացնում ենք գործնականորեն բոլոր եզդիներին հայտնի, առավել հաճախ ու մեծ քանակություններով օգտագործվող վայրի սննդային, համեմունքային և բուժական նշանակության բույսերի ցանկը:

Աղյուսակ 1.

Հայաստանի եզդիների և քրդերի կողմից առավել հաճախ օգտագործվող վայրի բույսերը²⁰

²⁰ Եզդիների և քրդերի կողմից օգտագործվող վայրի բույսերի կազմը աղյուսակում նշված ցուցակով բոլորովին չի սահմանափակվում. ներկայացնում ենք միայն համեմատաբար համատարած օգտագործվող բույսերը:

Բույսի անունը ²¹	Օգտագործվող մասերը	Նշանակությունը և օգտագործման տարբերակները
<p><i>Tíršo</i> [տոռշո] ավելուկ щавель <i>Rumex crispus</i> L. (Polygonaceae)</p>	<p>հիմնականում երիտասարդ տերևները, երբեմն ամբողջ ընձյուղները</p>	<p>սննդային. ջրիկ ճաշ (նաև սպասի մեջ) և տապակած²² բուժական²³</p>
<p><i>Gezgez</i> [գյազգյազկ] եղինջ երկտուն крапива двудомная <i>Urtica dioica</i> L. (Urticaceae)</p>	<p>երիտասարդ ընձյուղները</p>	<p>սննդային. թարմ վիճակում անմիջապես դաշտում, տանը՝ աղով, ջրիկ ճաշ բուժական. հողերի համար (դաղում են ցավող մասերը կամ դնում են ցավող մասերի վրա)</p>
<p><i>Tolik</i> [տոլրկ] փիփերթ мальва <i>Malva neglecta</i> Wallr., <i>M. pusilla</i> Smith (Malvaceae)</p>	<p>երիտասարդ ընձյուղները</p>	<p>սննդային. ջրիկ ճաշ (նաև սպաս) բուժական. ստամոքսի համար</p>
<p><i>Nancocok</i> [նանջուջրկ], nancocok [նանջուջուկ], nanջոջոկ [նանձուձուկ] (nan՝ հաց, cocok՝ ձուտ) ծոսան պաշար горец птичий <i>Polygonum aviculare</i> L. (Polygonaceae)</p>	<p>երիտասարդ ընձյուղները</p>	<p>սննդային. թարմ վիճակում նաև աղով, ջրիկ ճաշերի մեջ, տապակած, ժածիկի (կաթնաշոռ) մեջ</p>

²¹ Բույսերի անունները ներկայացված են հետևյալ հերթականությամբ՝ եզդիերեն (արտասանական լատինատառ տարբերակները տրված են ըստ Մամե Ամիրյանի), հայերեն, ռուսերեն, լատիներեն (կենսաբանական՝ բինոմիալ անունը):

²² Բոլոր տապակվող բույսերը պատրաստվում են սոխով կամ ձվով:

²³ Բոլոր վայրած ուտելի բույսերը համարում են առողջարար: Կոնկրետացնելու խնդրանքին բանասացները սովորաբար պատասխանում են «Ամեն ինչի համար էլ լավ է, առողջարար է» կամ հերթով նշում են իրենց իմացած բոլոր օրգաններն ու օրգան համակարգերը:

<p><i>Siping</i> [սրպնրգ] սինձ <i>козлобородник</i> <i>Tragopogon sp.</i> (<i>Asteraceae</i>)</p>	<p>Երիտասարդ ընձյուղները</p>	<p>սննդային. թարմ վիճակում նաև դաշտում աղով, ջրիկ ճաշերի մեջ, տապակած</p>
<p><i>Mindik</i> [մընդըկ], <i>mendik</i> [մանդակ] շուշանբանջար <i>бутень</i> <i>Chaerophyllum spp.</i> <i>div.</i> (<i>Apiaceae</i>)</p>	<p>Երիտասարդ ընձյուղները</p>	<p>սննդային. տապակած, սպասի մեջ, թթու դրած վիճակում</p>
<p><i>Puxesk</i> [փեղասկ] սիբեի սովորական <i>резак обыкновенный</i> <i>Falcaria vulgaris</i> <i>Bernh.</i> (<i>Apiaceae</i>)</p>	<p>Երիտասարդ ընձյուղները</p>	<p>սննդային. տապակած</p>
<p><i>Serzar</i> [սարզար] գետնահովանցուկ անցողուն <i>низкозонтничник</i> <i>бесстебельный</i></p>	<p>վերգետնյա մասը</p>	<p>սննդային. տապակած, շոռի (կաթնաշոռ) մեջ</p>
<p><i>Chamaesciadium</i> <i>acaule</i> (<i>M.Bieb.</i>) <i>C.A.Mey.</i> (<i>Apiaceae</i>)</p>		
<p><i>Silmask</i> [սըլմասկ] թելուկ <i>мать, лебеда</i> <i>Chenopodium album</i> <i>L., Chenopodium spp.</i> (<i>Amaranthaceae</i>)</p>	<p>Երիտասարդ ընձյուղները</p>	<p>սննդային²⁴. տապակած</p>
<p><i>Silqoq</i> [սըլկոկ] հավակատար <i>амарант</i> <i>Amaranthus</i> <i>retroflexus L.,</i> <i>Amaranthus spp.</i></p>		

²⁴ Սըլմասկը և սըլկոկը օգտագործման առումով համանման են, հաճախ պատ-
րաստվում են միասին:

<i>(Amaranthaceae)</i>		
<i>SSptikok [սիսկուկ]</i> <i>սպիտակ բանջար</i> <i>птицемлечник</i> <i>Ornithogalum</i> <i>hajastanum Agarova</i> <i>(Liliaceae)</i>	<i>երիտասարդ տերևները</i>	<i>սննդային. տապակած</i>
<i>Elegez [ալազազ]</i> <i>ալազազ</i> <i>пушкиния</i> <i>Puschkinia scilloides</i> <i>Adam (Hyacinthaceae)</i>	<i>տերևները</i>	<i>սննդային. տապակած</i>
<i>NanqivSk [նանճվիկ]</i> <i>(Nan ` հաց, qivSk `</i> <i>ճնճղուկ, ճուտ)</i> <i>ճնճղապաշար,</i> <i>ճտան պաշար, ծտի</i> <i>հաց, հովվամախաղ</i> <i>пастушья сумка</i> <i>Capsella bursa-pastoris</i> <i>(L.) Medik.</i> <i>(Brassicaceae)</i>	<i>երիտասարդ ընձյուղները</i>	<i>սննդային. տապակած</i>
<i>Reske rovS [ռասկե</i> <i>ռուվի] (աղվեսի</i> <i>պաշար, բաժին)</i> <i>վայրի սպանախ</i> <i>дикий шпинат</i> <i>Spinacia oleracea L.</i> <i>(Amaranthaceae)</i>	<i>երիտասարդ ընձյուղները</i>	<i>սննդային. տապակած, սպասի մեջ</i>
<i>Soy [սոյ]</i> <i>բոխի</i> <i>фенхель конский</i> <i>Hippomaranthum sp.</i> <i>(Ariaceae)</i>	<i>ցողունները,</i> <i>երբեմն նաև</i> <i>տերևները</i>	<i>սննդային. թթու</i>
<i>SSrmS [սիրմի]</i> <i>սխտորուկ,</i> <i>սխտորիկ</i>	<i>վերգետնյա</i> <i>մասը, երբեմն</i> <i>նաև</i>	<i>համեմունքային. պանրի մեջ</i>

<p>лук <i>Allium spp. (Alliaceae)</i></p>	<p>սոխուկները</p>	
<p>Ponig [պունգ] դաշնի, նանա мята <i>Mentha spp. (Lamiaceae)</i></p>	<p>երիտասարդ ընձյուղները՝ հիմնականում մինչև ծաղկելը</p>	<p>համեմունքային. թեյ, ճաշերի, սպասի մեջ և այլն բուժական. թուրմը՝ որպես հակաբորբոքային միջոց</p>
<p>CntrS [ջաթոխ], gnnrS [ջանթոխ] ուրց тимьян <i>Thymus spp. (Lamiaceae)</i></p>	<p>վերգետնյա մասը</p>	<p>համեմունքային. պանրի, ժածիկի (կաթնաշոռ), ճաշերի՝ ներառյալ սպասի մեջ և այլն բուժական. թեյը՝ թուրմը՝ որպես ճնշումը իջեցնող և հանգստացնող միջոց</p>
<p>Bebone [բաբունա] (?), օռանաշկա²⁵ երիցուկ ромашка <i>Tripleurospermum sp. in Anthemideae Cass.</i> տրիբայի այլ ներկայացուցիչներ (Asteraceae)</p>	<p>վերգետնյա մասը կամ միայն ծաղիկները</p>	<p>բուժական. թուրմը՝ որպես բազմաթիրախի հակաբորբոքային համեմունքային. սպասի մեջ</p>
<p>«Չվերաբոյ»²⁶ արևքուրիկ խոցված зверобой продырявленный <i>Hypericum perforatum L. (Hypericaceae)</i></p>	<p>վերգետնյա մասը՝ ծաղկած վիճակում</p>	<p>համեմունքային. թեյ բուժական. թուրմը՝ թեյը՝ որպես հակաբորբոքային</p>
<p>«Անթառամ»²⁷ անթառամ бессмертник</p>	<p>վերգետնյա մասը՝ ծաղկած</p>	<p>բուժական. հակաբորբոքային</p>

²⁵ Օգտագործում են ռուսերեն անունը, եզդիերեն, երբեմն նաև հայերեն անունները չգիտեն:

²⁶ Տե՛ս նախորդը:

²⁷ Օգտագործում են հայերեն անվանումը, եզդիերեն անունը հայտնի չէ:

<i>Helichrysum spp.</i> (<i>Asteraceae</i>)	վիճակում	
«Մարիամախոտ» ²⁸ <i>Մարիամախոտ</i> <i>дубровник</i> <i>Teucrium polium L.</i> (<i>Lamiaceae</i>)	վերգետնյա մասը՝ ծաղկած վիճակում	բուժական. հակաբորբոքային
<i>SSsindir [սիսընդրը],</i> <i>sosindar</i> <i>[սուսընդար],</i> <i>sosindUr</i> <i>[սուսընդեր],</i> <i>sSsindUr [սիսընդեր],</i> <i>sSsindar [սիսընդար]</i> կետավոր լվածաղիկ (նաև մեղվամուշկ, տարկավան, սուսամբար ²⁹)	վերգետնյա մասը՝ հիմ- նականում ծաղկած վիճակում	բուժական. թուրմը օգտագործվում է «կանացի հիվանդությունների», «չբերության», «երիկամների, ստամոքսի, աղիքային բորբոքումների», ատամնա- ցավերի ժամանակ թրջոցները՝ վերքերի վրա
<i>пижма точечная</i> <i>Tanacetum punctatum</i> (<i>Desr.</i>) <i>Grierson</i> (<i>Asteraceae</i>)		
<i>Hewajo [հավածո],</i> <i>hUwoajo [հեուածո],</i> <i>hUvajo [հեվածու]</i> <i>իժախոտ</i> <i>румянка, синяк</i>	արմատները	բուժական. յուղի կամ ձեթի մեջ դադած վիճակում (յուղը կարմրում է) օգտագործվում է այրվածքներ, վերքեր, հագ, թոքաբորբ բուժելու համար

²⁸ Տե՛ս նախորդը:

²⁹ «Սուսամբարը» *Tanacetum* ցեղի տեսակների համար, թերևս, ամենաքիչ նշվող անունն է (այն միշտ բերվում է ամենավերջում), սակայն եզրիններն այն հիշատակում են, որպես սիսընդերի հայերեն անուն: Սուսամբար անունով մի քանի և իրարից բոլորովին տարբեր բույսեր են նշվում (Պ. Ղ ա ն դ ի լ յ ա ն, Ա. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի գենոֆոնդը. Երևան, 1999, էջ 25, Ա. Ս ու ք ի ա ս յ ա ն. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 2009, էջ 593): Ներկայումս որոշ հայեր էլ գիտեն *Tanacetum punctatum*-ի բուժիչ հատկությունների մասին և օգտագործում են այն, սակայն, ինչպես ներկայացնում են եզրի բանասացները, հիմնականում իրենց են խնդրում, որ սարերից բերեն: Ենթադրում ենք, որ մեր օրերում այս բույսը հայերին այնքան էլ ծանոթ չէ, դրա մասին լսել են իրենց հետ ապրող եզրիներից, սակայն իրենք անունը չեն իմացել և փորձելով գտնել հայերեն համարժեքը՝ կարծել են, որ դա կլինի, վերցրել և օգտագործել են հնչողությամբ առավել մոտ բուսանունը՝ սուսամբարը (սիսընդրը, սիսընդար, սուսընդար, սուսանդար – սուսամբար):

<i>Echium spp.</i> (<i>Boraginaceae</i>)		
<i>BelgU hewoz</i> [բալգե հավրգ] (<i>BelgU</i> ՝ տերև, <i>hewoz</i> ՝ ավազան, ջրավազան) <i>եզան լեզու</i> <i>подорожник большой</i> <i>Plantago major L., Plantago spp.</i> (<i>Plantaginaceae</i>)	տերևները	բուժական. թարմ վիճակում՝ մաշկի վնասվածքների վրա, թուրմը՝ ներքին բորբոքումների ժամանակ սննդային. տոլմա են փաթաթում
<i>Bilq</i> [բրլք] կրատուկ <i>лопух</i> <i>Arctium lappa L.</i> (<i>Asteraceae</i>)	տերևները	բուժական. հողացավերի դեմ (ցավող հողերը փաթաթում են տերևներով)

Բույսերից բացի, եզդիները մեծ ծավալներով ուտելի սնկեր («կարի») են հավաքում, սակայն տեսակների բազմազանությունը մեծ չէ («գառան դմակ», «կապույտ պոչ» և այլն): Ինչպես հայերը, նրանք նս շատ զգուշավոր են սնկերի օգտագործման հարցում, հաճախ թունավոր են համարում նաև ուտելի սնկերը:

Այսպիսով՝ կարծրատիպը, որ եզդիները և քրդերը բուսական տնտեսություն, մշակույթ չունեն, իրականությանը չի համապատասխանում: Եզդիների ու քրդերի գյուղատնտեսությունը սահմանափակված չէ անասնապահությամբ՝ նրանք հաճախ մշակում են նույն բույսերը, ինչ տվյալ տարածքում ապրող հայերը: Ներկայումս երբեմնի անասնապահների մի մասը նույնիսկ թողել է իր նախկին կենցաղավարումը և զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանջարաբոստանային մշակաբույսերի մշակմամբ կամ բուսաբուծության այլ ուղղություններով: Ինչ վերաբերում է բնական բուսական ռեսուրսների օգտագործմանը՝ եզդիներն ու քրդերն ունեն բավական հարուստ և ուրույն բուսահավաքչական մշակույթ ու ավանդույթներ³⁰:

³⁰ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ -SCS 13-6F457 գիտական նախագծի շրջանակներում ՀՀ ԳԳՆ ԳՊԳ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ: Դաշտային նյութերի հավաքին մասնակցել են նաև Ավետիս Քեշիշյանը և Լիլի Հարությունյանը:

ПРАКТИКИ РАСТЕНИЕВОДСТВА И СОБИРАТЕЛЬСТВА В
КУЛЬТУРАХ ЕЗИДОВ И КУРДОВ АРМЕНИИ (ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ
ДАННЫЕ)

РОМАН ОВСЕПЯН, НИНА СТЕПАНЯН-ГАНДИЛЯН,
ГАМЛЕТ МЕЛКУМЯН

Резюме

Предварительные результаты исследований связанной с растениями культуры езидов и курдов, проживающих в Армении, позволяют говорить о большой роли растений в их повседневной жизни. Помимо растениеводства, которое практически не отличается от такового у армян, проживающих в тех же местностях, для езидов и курдов характерна культура собирательства, имеющая черты самобытности, а также сопряженные с ней навыки кулинарии и траволечения.

PLANT CULTIVATION AND GATHERING PRACTICES
IN YEZIDIS' AND KURDS' CULTURES
(PRELIMINARY DATA)

ROMAN HOVSEPYAN, NINA STEPANYAN-GHANDILYAN,
HAMLET MELKUMYAN

Summary

Preliminary results of studies related to the plant culture of Yezidis and Kurds of Armenia show the importance of plants in their everyday life. Except agriculture, which practically does not differ from that of the Armenians of those regions, Yezidis and Kurds have traditional plant gathering culture accompanied with corresponding culinary and healing activity.